

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱՆ

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս Թորոնթոյի Միջ-Յարանուանական մարմինը միասնականութեան ոգիով ճամբայ ելլելով կազմակերպեց Սրբոց Վարդանանց Չորավարաց տօնակատարութիւն եւ հաւաքական աղօթք, մասնակցութեամբ՝ Հայ Աւետարանական, Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական, Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցիներու, որ տեղի ունեցաւ 11 Փետրուար 2010 Հինգշաբթի երեկոյ, Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ, հոժ բազմութեան ներկայութեամբ:

Հանդիսութենէն առաջ Տիկ. Թամար Ալպարեանի դաշնամուրի վրայ նուագէն ետք, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Վեր. Սամուէլ Ալպարեան հանդէս եկաւ ըսելով, « Այսօր Վարդանանց Է, եկած ենք տօնելու Վարդանները, եկած ենք տօնելու մեր հերոսները անցեալի եւ ներկայի, եկեք միասնաբար աղօթենք անոնց հոգիներուն համար »: Ապա միաբերան երգուեցաւ Տերունական Աղօթքը:

Ս. գրքէն ընթերցումներ կատարեց Պետրոս Նիկողոսեան, Վարդանանցի հաւաքական աղօթքը կատարեց Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Հոգ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան:

Վեր. Պարգեւ Աբարդեանի « Խորհուրդ Վարդանանց » քերթուածը գեղեցկօրէն մեկնաբանեց Սեդա Փանոսեան:

Մեր արժանաւոր երիտասարդուհիներէն Լին Իշնար մեներգեց խօսք՝ Ռաֆայէլ Պատկանեանի, երաժշտութիւն՝ Մակար Եկմալեանի « Լոեց Ամպերը » կտորը դաշնակի ընկերակցութեամբ Հռիփսիմէ Տէմիրճեանի, որ անգամ մը եւս իր կարողութիւնը ցոյց տալով աժանացաւ երկարատեւ ծափահարութիւններու:

Օրուան պատգամախօս Հայ Օգնութեան Միութեան ամենօրեայ վարժարանի Տնօրէն Տօքթ. Արմէն Մարտիրոսեանի կենսագրականը մանրամասնօրէն ներկայացուց Ռաֆֆի Տեր Պօղոսեան:

Տօքթ. Մարտիրոսեան իր բանախօսութեան մէջ Հայ ազգի հոգեբանական կառոյցը բնորոշող, պատմութենէն եւ մատենագրութենէն առնուած երկու պարբերութիւններու վրայ մասնաւորաբար կանգ առաւ:

« Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց եւ ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ »:

Բանախօսը այս պարբերութիւններու վրայ կեդրոնանալով ըսաւ թէ « Դժուար է իսկապէս գտնել մեր ժողովուրդի հաւաքական ապրումները աւելի հարազատօրէն արտայայտող երկու նախադասութիւններ, որքան այս երկուքը որոնք եղան հայկական հոգին բոցավառողները »:

Տօքթ. Մարտիրոսեան իր արտայայտութիւնները շարունակեց հետեւեալ խօսքերով: « Սրբոց Վարդանանց անմահներու կտակով գօտեպնդուած, եկեք ուխտենք վառ պահել քրիստոնեական հաւատքը մեր ընտանիքներուն, մեր եկեղեցիներուն եւ մեր կրթական օճախներուն մէջ: Հայ ծնողներու ուսերուն վրայ դրուած է ազգային ծանր պարտականութիւն, պահել հայ ընտանիքէն ներս հայեցի դաստիարակութեան սկզբունքը, նահապետական ասանդութիւնները եւ հայրենիքի սերը, կանգուն պահել հայեցի դաստիարակութեան միջնաբերդը՝ հայ դպրոցը: Ուրեմն վարդանանց ճակատամարտը կը սկսի մեր տուններէն ու կը տարածուի հայ դպրոցի դաստիարակութեամբ մինչեւ կը հասնի Հայ եկեղեցւոյ կամարները »:

Տօքթ. Արմէն Մարտիրոսեան իր շահեկան բանախօսութիւնը վերջացուց, ըսելով՝ « Սրբոց Վարդանանց յիշատակին նուիրուած այս օրը մեր անհատնում սրբութիւնները, անսահման հաւատքով եւ անջնջելի կնիքով դրոշմենք մեր գալիք սերունդներուն մտքերուն մէջ, վերածելով զանոնք արժանավայել ժառանգորդները Վարդանանց սրբազան նահատակներուն »: Այս առթիւ իր սրտաբուխ գնահատական հիացումը յայտնեց, Միջ-Յարանուանական մարմնին որոնք կազմակերպեցին այս երեկոյթը:

Այնուհետեւ Թորոնթոյի « Նայիրի » երգչախումբը ղեկավարութեամբ ծանօթ խմբավար Սարգիս Համպոյեանի, դաշնակի ընկերակցութեամբ Լիլիթ Սմբատեանի հանդէս եկաւ, Ս. Ներսէս Շնորհալիի « Նորահրաշ Պսակաւոր » շարականով, որուն ներկաներն ալ իրենց երգեցողութեամբ մասնակից դարձան: Երգչախումբը՝ Խօսք Սիմոն Ֆելէկեան, երաժշտական մշակում Վահան Յ. Պետելեանի « Կարմիր Վարդան » եւ խօսք՝ Ռաֆայել Պատկանեան, երաժշտական մշակում Կոմիտասի « Հիմի էլ լռենք » կտորները մեկնաբանեց, արժանանալով ջերմ գնահատանքի:

Շնորհակալութեան խօսք արտասանեց Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Չարեհ Ա. Քհնյ. Չարգարեան, որ շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալ եկեղեցւոյ ու իր հովիւին, մասնակից բոլոր արուեստագետներուն, երգչախումբին ու իր խմբավարին, որոնք սիրայօժար կերպով իրենց մասնակցութիւնը բերին: Յատկապէս շնորհակալութիւն յայտնեց օրուայ բանախօսին, որ իմաստալից կերպով փոխանցեց իր պատգամը Վարդանանց հերոսամարտի եւ Հայ ժողովուրդի պատմութեան հետ առնչուող հարցերու մասին: Շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ Միջ-Յարանուանական մարմնին որոնք այս գեղեցիկ երեկոյթը կազմակերպեցին: Ապա Տէր Հայրը հակիրճ ձեւով փոխանցեց իր սրտի խօսքը:

Օրուայ հանդիսութիւնը Հայ եկեղեցւոյ առաւօտեան եւ երեկոյեան երկու աղօթքներով փակեց ու պահպանիչը արտասանեց, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր Հովիւ՝ Հայր Եղիա Ծ. Վրդ. Զիրեճեան: Ապա եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Հոս յատկապէս բարձր կը գնահատենք Միջ-Յարանուանական մարմնի աշխատանքը գլխաւորութեամբ իրենց ժրաջան ատենապետին, քաղաքիս քաջածանօթ ազգայիններէն Տիար Յակոբ Ճանպազեանի, որ միշտ զօրավիջ կը կանգնի այսպիսի միասնական ձեռնարկներ կազմակերպելու: